ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 19.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/20

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.02.2018թ. թիվ 03/26-3/2029-18 գրությամբ «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 05.02.2018թ. թիվ ԴՎԱ/410 գրության հիման վրա, 07.02.2018թ. թիվ 03/26-3/2029-18 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>«ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 16.02.2018թ. թիվ 7231 գրությամբ հայտնել է, որ «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընկերությունը թիվ 4 հավելվածով՝ գնային առաջարկով, առաջարկել է պայմանագիրը կատարել 67 881 240 ՀՀ դրամով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.01.2018թ. որոշել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ նաև՝ Կոմիտե) հարցում ներկայացնել գնման ընթացակարգի արդյունքում 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի մասով նախատեսված տվյալների ճշտման մասին:

Կոմիտեի կողմից 19.01.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմել է 67 707 113 ՀՀ դրամ:

Վերոգրյալով պայմանավորված՝ Ընկերությունը ներկայացրել է «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ի 2016թ., 2015թ., 2014թ. շրջանառության հարկի հաշվարկի հաշվետվությունները, որի համաձայն Ընկերության 2016թ. համախառն եկամտի հանրագումարը կազմում է 29 014 750, 2015թ.՝ 19 777 445 և 2014թ.՝ 19 214 918 ՀՀ դրամ, ընդամենը՝ 68 007 113, որը հաստատվել է Կոմիտեի կողմից:

Բացի այդ, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 14 բաժնի կողմից «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ին 14.02.2018թ. տրվել է տեղեկանք, համաձայն որի՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների ՀՎՍՎ թիվ 14 բաժնում հաշվառված «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ի կողմից 2014թ., 2015թ. և 2016թ. ներկայացված շրջանառության հարկի հաշվարկների համաձայն իրացման շրջանառությունը կազմում է.

2014թ-19 214 918 ՀՀ դրամ,

2015թ-19 777 445 ՀՀ դրամ,

2016թ-29 014 750 ՀՀ դրամ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ ֆինանսական միջոցներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝

հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Այսպիսով, Ընկերությունը գտնում է, որ «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ն բավարարել է Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով և Կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված՝ Ընթացակարգի հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշներին, քանի որ հայտը ներկայացնելուն (2017թ.)

նախորդող երեք հաշվետու տարիների (2016թ., 2015թ., 2014թ.) համախառն եկամտի հանրագումարը կազմել է 68 007 113 ՀՀ դրամ, իսկ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը եղել է 67 881 240 ՀՀ դրամ:

Որպես վերոգրյալ փաստերի ապացույց, ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացվել է «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ի 2016թ., 2015թ., 2014թ. շրջանառության հարկի հաշվարկի հաշվետվությունները և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 14 բաժնի կողմից «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ին 14.08.2018թ. տրված տեղեկանքի պատճենը:

Ելնելով վերոգրյալից՝ «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարության գրության հիման վրա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնված «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգը մերժել՝ Ընկերությանը չներառել Ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 13.02.2018թ. ժամը 11:40-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 05.02.2018թ. թիվ ԴՎԱ/410 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի 1-ին չափաբաժնի մասով «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Հայտերի բացման նիստի ավարտից հետո սահմանված կարգով Ընկերությանը Armeps համակարգի միջոցով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ և ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է կատարվել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ստացված եզրակացության համաձայն՝ «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ի «Ֆինանսական միջոցներ» չափանիշը չի համապատասխանում հրավերի պայմաններին, ուստի Ընկերությանը սահմանված կարգով ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

Ընկերության կողմից պահանջվող շտկումները չեն ներկայացվել, ուստի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 48-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշել է մերժել Ընկերության հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 13.02.2018թ. ժամը 11:40-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՖ-ԱՄ-2018/20 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՖ-ԱՄ-2018/20 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքերի համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների 21.12.2017թ. հայտ է ներկայացրել «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է ***67 881 240 ՀՀ դրամ:***

3. Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով:

5. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով սահմանված կարգով 19.01.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ի ***հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 67 707 113 ՀՀ դրամ:***

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 23.01.2018թ. Armeps համակարգի միջոցով ծանուցել է «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշում արձանագրված անհամապատասխանությունը, որը սակայն Ընկերության կողմից չի շտկվել:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշմամբ «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

8. «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 14 բաժնի կողմից 14.02.2018թ. տրված տեղեկանքը, համաձայն որի՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների ՀՎՍՎ թիվ 14 բաժնում հաշվառված «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ի կողմից 2014թ., 2015թ. և 2016թ. ներկայացված շրջանառության հարկի հաշվարկների համաձայն իրացման շրջանառությունը կազմում է՝

2014թ.- 19 214 918 ՀՀ դրամ,

2015թ.- 19 777 445 ՀՀ դրամ,

2016թ.- 29 014 750 ՀՀ դրամ:

9. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 16.02.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/2818-18 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել, թե որքան է կազմում «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների՝ 2014թ., 2015թ. և 2016թ. համախառն եկամտի հանրագումարը:

10. Ի պատասխան Խորհրդի 16.02.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/2818-18 գրությանը՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 12.03.2018թ. թիվ 1.3/6-1/11431-18 գրությամբ հայտնել է, որ ***«ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ի 2014թ., 2015թ. և 2016թ. համախառն եկամտի հանրագումարը կազմում է 68 007 113 ՀՀ դրամ:***

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.02.2018թ. թիվ 03/26-3/2029-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 05.02.2018թ. թիվ ԴՎԱ/410 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 12.03.2018թ. թիվ 1.3/6-1/11431-18 գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց

հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված

տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և

փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքերի համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթ:

Նշված մրցույթի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.5-րդ ենթակետի 3-րդ պարբերությունը սահմանում է, որ մասնակցին ներկայացվող «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը.

բ. սույն ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, որի իսկությունը հանձնաժողովը գնահատում է սույն հրավերով սահմանված պայմաններով:

Հրավերի ՄԱՍ Ի-ի 8-րդ կետի 8.13-րդ ենթակետի 3-րդ պարբերության համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Նույն կետի 8.20-րդ ենթակետի 2-րդ պարբերությունը սահմանում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և (կամ) ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ներառյալ ապրանքի ամբողջական նկարագրի վերաբերյալ:

Հրավերի 8-րդ կետի 8.21-րդ ենթակետի 2-րդ պարբերության համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.20-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթին հայտ ներկայացրած «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ն հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է ***67 881 240 ՀՀ դրամ***:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով սահմանված կարգով 19.01.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է ***67 707 113 ՀՀ դրամ:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 23.01.2018թ. Armeps համակարգի միջոցով ծանուցել է «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշում արձանագրված անհամապատասխանությունը, որը սակայն Ընկերության կողմից չի շտկվել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշմամբ «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

«ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ն սույն պաշտոնական ընթացակարգի շրջանակներում Խորհրդին ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 14 բաժնի կողմից 14.02.2018թ. տրված տեղեկանքը, համաձայն որի՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների ՀՎՍՎ թիվ 14 բաժնում հաշվառված «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ի կողմից 2014թ., 2015թ. և 2016թ. ներկայացված շրջանառության հարկի հաշվարկների համաձայն իրացման շրջանառությունը կազմում է՝

2014թ.- 19 214 918 ՀՀ դրամ,

2015թ.- 19 777 445 ՀՀ դրամ,

2016թ.- 29 014 750 ՀՀ դրամ:

Միևնույն ժամանակ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 16.02.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/2818-18 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով

հայտնել, թե ինչքան է կազմում «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների՝ 2014թ., 2015թ. և 2016թ. համախառն եկամտի հանրագումարը, որին ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 12.03.2018թ. թիվ 1.3/6-1/11431-18 գրությամբ հայտնել է, ***որ «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ի 2014թ., 2015թ. և 2016թ. համախառն եկամտի հանրագումարը կազմում է 68 007 113 ՀՀ դրամ:***

Այսպիսով՝ Խորհուրդն արձանագրում է, որ «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացվելուն (2017թ.) նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը, համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 14 բաժնի կողմից 14.02.2018թ. տրված տեղեկանքի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 12.03.2018թ. թիվ 1.3/6-1/11431-18 գրության, կազմում է ***68 007 113 ՀՀ դրամ, որը պակաս չէ Ընկերության կողմից հայտի թիվ 4 հավելվածով ներկայացված գնային առաջարկից (67 881 240 ՀՀ դրամ):***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 14 բաժնի կողմից 14.02.2018թ. տրված տեղեկանքը և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 12.03.2018թ. թիվ 1.3/6-1/11431-18 գրությունը, Խորհուրդը գտնում է, որ «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետը՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.02.2018թ. թիվ 03/26-3/2029-18 գրությամբ «ՍՖՍ ԱՐԽՈ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 09704589) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**